600.0250.31.08.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

31 օգոստոսի 2016 թվականի №250Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի №433Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՆատԷներգո 68» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի օգոստոսի 19-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի «ՎԳԱՀ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գոմք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №433Ա որոշմամբ «ՎԳԱՀ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 15-ի «ՎԳԱՀ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության №0523 լիցենզիան վերաձևակերպելու մասին» №244Ա որոշմամբ «ՆատԷներգո 68» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ վերաձևակերպված «Գոմք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0523 լիցենզիայի պայմանների 6-րդ և 10-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 3220 կՎտ հաշվարկային հզորությամբ «Գոմք» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:»,

«10. «Գոմք» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 3200 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ CJA 237-W-110/1x11, 1600 կՎտ, 2016թ,
2) գեներատոր №1՝ SFW 1600-10/1730, 1600 կՎտ, 2016թ,
3) հիդրոտուրբին №2՝ CJA 237-W-110/1x11, 1600 կՎտ, 2016թ,
4) գեներատոր №2՝ SFW 1600-10/1730, 1600 կՎտ, 2016թ:»:

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2015 թվականի օգոստոսի 5-ի №651-7389 գրությամբ ներկայացված №ԲԵՆ15/93-58 երաշխիքով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև «Գոմք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0523 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի համար ստանձնած ութ միլիոն հիսուն հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆՊԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
31 օգոստոսի 2016թ.
ժամը 16[00]